ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

<<ՇՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-21/01>> ծածկագրով գնանշման հարցումով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

Գ.Նահապետավան 19.07.2021թ

Ժամը 11:00

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Պետրոսյան – համայնքի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մնոյան - գլխավոր մասնագետ ֆինանսիստ
Ն. Գրիգորյան - երկրորդ կարգի մասնագետ
Ա. Գրիգորյան - համայնքի բնակիչ

Հանձնաժողովի քարտուղար՝ Բ. Չախոյան - համայնքապետարանի օպերատոր

1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

/զեկուցող Գ. Պետրոսյան/

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին.
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին
6. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մասին
7. Բանակցությունների հրավիրելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

2. Գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

/ զեկուցող Գ. Պետրոսյան/

Ընդունել ի գիտություն,որ սահմանված ժամկետում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել մեկ մասնակից

N	Մասնակիցի անվանումը	Էլ. Փոստի հասցեն
1.	<<Ույուտ Սենտր>> ՍՊԸ	uyut-centr@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

/զեկուցող Գ. Պետրոսյան/

Հրավերի պահանջներին համապատասխան հայտ էկազմել և ներկայացրել է մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

/զեկուցող Գ. Պետրոսյան/

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր կազմել և ներկայացրել է <<Ույուտ Սենտր>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

***6.* Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մասին**

Ընդունել ի գիտություն,որ գնման առարկա է հանդիսանում Նահապետավանի համայնքապետարանի կարիքների համար <<Նահապետավան համայնքի ներհամայնքային 1-ին փողոցի տուֆ քարով սալապատում>> աշխատանքների ձեռք բերումը:

Պայմանագիրը կատարելու համար մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Աշխատանքի անվանումը	Մասնակիցներ	Արժեք(Ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5*
Նահապետավանի համայնքապետարանի կարիքների համար <<Նահապետավան համայնքի ներհամայնքային 1-ին փողոցի տուֆ քարով սալապատում>>	<<Ույուտ Սենտր>> ՍՊԸ	54300000(հիսուն չորս միլիոն երեք հարյուր հազար)		54300000(հիսուն չորս միլիոն երեք հարյուր հազար)

Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան տառային և թվային տարբերակների միջև անհամապատասխանելիություններ:

7. Բանակցությունների հրավիրելու մասին

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով այն հանգամանքը,որ գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N526-Ն որոչման 40-րդ կետի 5-րդ ենթակետի <<ա>> պարբերությունը,ընտրված մասնակցի հետ վարվել են բանակցություններ գների նվազեցման շուրջ,քանի որ հայտ ներկայացրած մասնակիցը ներկա էր նիստին:

Բանակցությունների արդյունքում հայտ ներկայացրած մասնակիցը՝<<Ուլյուտ Սենտր>> ՍՊԸ-ն հրաժարվեց նվազեցնել առաջարկված գինը և նրա ներկայացրած գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Գնանշման հարցման ընտրված մասնակից հայտարարվեց՝<<Ուլյուտ Սենտր>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ ***Գ. Պետրոսյան***

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Մնոյան

_____ Ն. Գրիգորյան

_____ Ա. Գրիգորյան

Հանձնաժողովի ***քարտուղար*** _____ Բ. Չախոյան